

Անվերջ պաշտումով միայն, ով Արջունա, կարելի է ճանաչել ինձ այս ձևով, տեսնել իմ էությունը, թափանցել իմ մեջ:

Ով գործում է ինձ համար, իմ գերագոյնն է ճանաչում, ինձ է պաշտում միայն, ով շունի ցանկութիւն կամ ատելութիւն դէպի կենդանի էակները, նա դալիս է ինձ մօտ:

Այսեղ վերջանում է Բհագավադգիտի ռասնրսկերորդ գլուխը, որի անունն է Տիեզերական կերպարանի տեսիլք:

Շարունակելի

Թարգ. Հ. Անառեան



Գ Ր Ա ի Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

I

Մկրտութիւն Հայոց, Վրաց, Սրխաղաց և Ալանաց ի սրբոյն Գրիգորէ, ի ուսւ հրատարակութենէ, կատարելոյ ըստ արարելէն սրինակի յուսուցչապետ Նիկողայոսէ Մառ. Թարգմանեաց ի հայ միաբան Ս. Էջմիածնի Յուսիկ արքեպիսկոպոս (արտատպեալ յԱրարատ ամսագրէ) ի Վաղարշապատ, ելեքտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի 1911.

Մայր Աթոռի ժառանգաւորաց դպրոցը, որի պատմութիւնը դեռ չէ գրուած, մեր վանական դպրոցներէից միակն էր, որ իւր գոյութիւնը շարունակեց մինչև 80 ական թուականը փոխուելով ձեւարանի, ժառանգաւորաց դպրոցից են դուրս եկել մեր անցեալ դարու աչքի ընկնող հոգեւոր դրական անձինքն, այդ դպրոցի վերջին շրջանից են այժմեան միաբանութեան անագամներ Յուսիկ արքեպիսկոպոսը, Բարդուղիմէոս եպիսկոպոսը և Սահակ վարդապետ Ամատունին:

Գերապատիւ Յուսիկ արքեպիսկոպոսի աշխատութիւններից նշանաւոր է «Հայաստանեայց առաքելական Ս. եկեղեցւոյ պատմութիւնը», որ երկար ժամանակ մեր դպրոցներիում իբրև դասագիրք գործ է ածուել, իսկ նորա կրօնի դասագրքերը Ա. Բ. Գ. տարիների համար կրկին տպագրութեամբ է լոյս տեսել: Ապա նա հրատարակել է «Սի-

մէօն Սոոյ կաթուղիկոսի առ Փիլլիպպոս էջմիածնի կաթուղիկոս» գրած հետաքրքրական թուղթը և «Անապատականներ ու Վանականութիւն» գրքոյկը:

Իսկ վերջին գործը «Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց ի սրբոյն Գրիգորէ» թարգմանութիւն է Ս. Պետերբուրգի համալսարանի ուսուցչապետ Ն. Մառի արարերէն Ագաթանգեղոսի, որ հաշակաւոր հայագէտը 1902-ին Սինայի Ս. Եկատերինէի վանքի մատենադարանի թիւ 460 արարերէն ձեռագրից լուսանկարած, և ապա 1905-ին բնագրի հետ ուսներէն թարգմանութեամբ լոյս ընծայեց:

Այս արարերէն բնագիրը, որի սկիզբը պակաս է, մեր այժմեան Ագաթանգեղոսի համառօտութիւնը կարելի է համարել ինչ ինչ տարբերութեամբ, որ նոր լոյս է օժտում Ագաթանգեղոսի խմբագրութեան և հայ-վրացական եկեղեցու յարաբերութեան վերայ. «ի միջի այլոց կարող են հետաքրքրութիւն շարժել Մ. Խորենացու պատմութեան ուսումնասիրութեան համար կարեւորութիւն ունեցող մանրամասները», ինչպէս յարում է յարգելի ուսուցչապետը իւր ուսներէն յառաջարկելով: Ռուսերէն թարգմանութեան լուսանցքներում նշանակուած է հայերէնի Թիֆլիսի հրատարակութեան էջերը և Ս. գրքի վկայութիւնները. ապա ունի ընդարձակ վերջաբան և արաբական բնագրի բանասիրական — լեզուական ծանօթութիւններ:

Յուսիկ սրբազանը բաց է թողել վերջինները, որ այնքան էլ նշանակութիւն չունին ընթերցողների համար, բայց մնացեալը թարգմանել է և ծանօթութեանց մէջ անում է իւր առանձին դիտողութիւնները, որոնցից մեզ յաջող է թուում 1 ծանօթութեան վերջը դրուածը (էջ 129—130), բայց անյաջող 7 ծանօթութեան վերջն արած դիտողութիւնը: Արարերէնի Ափրուջեան չէ կարելի մօտեցնել Ախուրեան և կամ Արփաշայ անուան, որովհետեւ այստեղ խօսքը նախ ոչ թէ Բագրատունեաց մայրաքաղաք Անիի, որ Ե. դարում հազիւ մի անգամ յիշում է Ղ. Փարպեցին, այլ Դարանագեաց Անի կամ Հանի ամրոցի մասին է, բացի

այդ Արփաշայ անունը թուրքերէն է և ուրեմն հազիւ թէ ժ.Ա. դարուց առաջ գործածուած:

Մի դիտողութիւն ևս կուզենայինք անել այս թարգմանութեան լեզուի առթիւ: Յուսիկ սրբազանն ասում է. «Ռուսերէն թարգմանութիւնը վերածեցինք գրաբառ հայերէնի, որպէս զի նրանք, որ չգիտեն արաբերէն և ռուսերէն, իմանան թէ ինչ է այդ արաբական վերսիան՝ և ինչ առնչութիւն ունի Ագաթանգեղոսի հետ, և որ դիւրացնենք հայ Ագաթանգեղոսի հետ համեմատութիւնը, բայցի սրանից, գրաբառը օտարերկրեայ հայ և օտարազգի բանասէրների համար աւելի մատչելի է և ընտել» (Ազգ., էջ Բ.):

Նախ օտարազգի բանասէրներից շատերը, ինչպէս երևում է ոմանց աշխատութիւններից, գիտեն ևս աշխարհաբառ, էլ չեմ խօսում հայ բանասէրների մասին, որոնք այդ լեզուով գրում են, և որքան էլ որ ճիշտ է, որ արաբերէնի գրաբառ թարգմանութեամբ հայերէն Ագաթանգեղոսի հետ աւելի լաւ կը համեմատուի, քան աշխարհաբառը, բայց միւս կողմից Յուսիկ սրբազանի աշխարհաբառ թարգմանութիւնն անշուշտ աւելի հայ ընթերցողներ կունենար, քան գրաբառը: Իզուր չէ, որ անցեալ դարուց սկսուած փորձեր են լինում մեր դասական հեղինակները աշխարհաբառի վերածելու, քանի որ մեր նոր սերունդը, մանաւանդ օտար դպրոցներում կրթուածները գրաբառին անտեղեակ են: Վերջապէս մենք պէտք է մտածենք մեր աշխարհտբառը հարստացնելու մասին, որ իհարկէ կը լինի և թարգմանութիւններով: Գրաբառն արդէն իւր որոշ տեղն ունի, այդ եկեղեցին է. ինքը թարգմանին էլ ապաքէն գրքիս բովանդակութիւնը, իւր յառաջաբանը, ռուսերէնի վերջաբանը, յառաջաբանը ու ծանօթութիւնները (էջ 86—137) գրում է աշխարհաբառ: Այնուամենայնիւ այս գրաբառ թարգմանութիւնը որի «լեզուն սահուն է և հեշտալուր» ըստ վկայութեան ուսուցչապետ Մառի, օգտակար կը լինի շատ շատերին մանաւանդ տաճկահայերին:

Յուսիկ սրբազանը իւր թարգմանութեան սկզբում տուել է երկէջեան մի բովանդակութիւն և վերջն էլ յատուկ անուանց ցանկ, որ չունի ռուսերէն թարգմանութիւնը: Սրբազանի այդ նորութեան շնորհիւ հայերէն թարգմանութիւնը դործածութեան համար կարեւոր է դառնում ոչ միայն ռուսերէն չիմացողներին, այլև իմացողներին, որոնք արաբերէնի որևէ յատուկ անուն որոնելիս անմիջապէս կարող են գտնել և ոչ միայն հայերէն այլև ռուսերէն թարգմանութեան մէջ, քանի որ հայերէնում նշանակուած են ռուսերէնի ոչ միայն բնագրի այլև ծանօթութեանց էջերը. հանդամանքներ, որ լաւ մտածուած են:

Ս. Կանայիան



II

Н. Марръ.—Грамматика чанскаго (лазскаго) языка,
С. П. 1910. էջ XXX+240. գրին 2 н.

Իր բաղմաթիւ գիտական աշխատութեանց վրայ պրոֆ. Մարր վերջերս աւելացրեց լազերէնի քերականութիւնը:

Լազերէնը հարաւային Կովկասեան լեզուախմբին պատկանող մի լեզու է, որ ամենամօտիկ խնամութիւն ունի վրացերէնի, իմերեւերէնի, մինգրեւերէնի և սվաներէնի հետ: Այս լեզուն խօսում են լազերը՝ Նրանց հայրենիքն է Լազիստանը (հին անունով՝ Լազիկա), որ գտնւում է Սև ծովի եզերքը՝ Բաթումից սկսած մինչև Պատանայի Լազերը բաժանւում են երկու մասի. յոյն լազեր, որոնք յունացաւան են և խօսում են յունարէն, և բուն լազեր, որոնք դաւանում են մահմետական կրօնը և խօսում են լազերէն կամ թուրքերէն: Լազախօս լազերը բաւական սակաւաթիւ են և այս լեզուն հեռզհեռէ կորչելու վրայ է՝ տեղի տալով թուրքերէնին: Լազերէնը նաև գրական լեզու չէ եղած բնաւ, այսինքն որ և իցէ ժամանակ գրով աւանդուած չէ մեզ: Մինչև այսօր էլ լազերը գիր